Հավելված
ՀՀ կառավարության 2015 թվականի
դեկտեմբերի 17-ի N 1486 - Ն որոշման

Լ Ր Ա Վ Ճ Ա Ր Ն Ե Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻՆ ՍԱՀՄԱՆՎՈՂ

1. Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի պետական հիմնարկներում ու Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող մարզական կազմակերպություններում աշխատող՝ օլիմպիական խաղերի, աշխարհի, Եվրոպայի չեմպիոններին և մրցանակակիրներին, ինչպես նաև նրանց մարզիչներին համապատասխան պետական հիմնարկների ու Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող մարզական կազմակերպությունների համար նախատեսված հատկացումների հաշվին սահմանվում են ամսական լրավճարներ՝ հետևյալ չափերով՝

1) օլիմպիական խաղերի չեմպիոններին՝ 100 հազ. դրամ.

2) օլիմպիական խաղերի չեմպիոնների մարզիչներին՝ 50 հազ. դրամ՝ նրանց սաների չեմպիոն դառնալու օրվանից՝ 4 տարի ժամկետով.

3) օլիմպիական խաղերի 2-րդ մրցանակակիր մարզիկներին՝ 80 հազ. դրամ, իսկ նրանց մարզիչներին՝ 40 հազ. դրամ՝ նրանց սաների մրցանակակիր դառնալու օրվանից՝ 2 տարի ժամկետով.

4) օլիմպիական խաղերի 3-րդ մրցանակակիր դարձած մարզիկներին՝ 60 հազ. դրամ, իսկ նրանց մարզիչներին՝ 30 հազ. դրամ՝ նրանց սաների մրցանակակիր դառնալու օրվանից՝ 1 տարի ժամկետով.

5) աշխարհի չեմպիոն դարձած մարզիկներին՝ 80 հազ. դրամ, իսկ նրանց մարզիչներին՝ 40 հազ. դրամ՝ նրանց սաների չեմպիոն դառնալու օրվանից՝ 2 տարի ժամկետով.

6) Եվրոպայի չեմպիոն դարձած մարզիկներին՝ 60 հազ. դրամ, իսկ նրանց մարզիչներին՝ 30 հազ. դրամ, նրանց սաների չեմպիոն դառնալու օրվանից՝ 1 տարի ժամկետով.

7) աշխարհի և Եվրոպայի մրցանակակիրներ դարձած մարզիկներին՝ 40 հազ. դրամ, իսկ նրանց մարզիչներին՝ 20 հազ. դրամ՝ նրանց սաների մրցանակակիր դառնալու օրվանից՝ 1 տարի ժամկետով:

2. ԽՍՀՄ և Հայաստանի Հանրապետության վաստակավոր մարզիչների պաշտոնային դրույքաչափին սահմանվում է լրավճար 10 հազ. դրամի չափով, իսկ սպորտի վաստակավոր վարպետի, միջազգային կարգի սպորտի վարպետի, սպորտի վարպետի, շախմատի գծով միջազգային սպորտի վարպետի կամ գրոսմայստերի մարզական կոչում ունեցող, մասնագիտությամբ աշխատող մասնագետների համար նրանց պաշտոնային դրույքաչափի նկատմամբ սահմանվում է լրավճար՝ 1 300 դրամի չափով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ